ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
«17» 11 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000110

Ձեռնարկողը՝ ***Քաղաքացի Էդուարդ Հովհաննիսյան***
ք. Երևան, Նազարբեկյան թաղամաս հ.44/3

Գործունեությունը՝ ***Աջափնյակ վարչական շրջանի Նազարբեկյան թաղամաս հ.44/3 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարզյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000110

<<17>> 11 2020թ.

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջան, Նազարբեկյան թաղամաս հ.44/3 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջանի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ քաղաքացի Էդուարդ Հովհաննիսյան

Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ
Գ կատեգորիա

Տեղադրման վայրը՝ Երևան համայնք, Աջափնյակ վարչական շրջան

Ներածական մաս

Ըստ նախագծի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցումը քաղաքացի Էդուարդ Հովհաննիսյանի կողմից նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Նազարբեկյան թաղամաս հ.44/3 հասցեում:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 5883.13մ^{2}ընդհանուր մակերեսով հողամասում՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնականը՝ հասարակական կառուցապատման: Գործունեության նպատակը բնակելի շենքի կառուցումն է:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա. ենթակետի հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս.

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Աջափնյակ վարչական շրջանում, Նազարբեկյան թաղամաս հ.44/3 հասցեում և իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք, որում առկա են միահարկ շենք շինություններ 259.9մ^2 մակերեսով: Հողատարածքին կից գտնվում են Նազարբեկյան թաղամասի ներթաղամասային փողոցները, բնակելի և օժանդակ կառույցներով ծանրաբեռնված և կառուցապատումից ազատ հողամասերը:

Հողատարածքի վրա նախատեսվում է կառուցել 3 շինություն՝ 2 բնակելի շենք և մուտք դեպի ավտոկայանատեղի, որը տեղակայված է երկու շենքերի միջանցքում:

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ ԷԿՍՊԵՐՏԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЭКСПЕРТНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EVALUATION EXPERTISE CENTER
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Ավտոկայանատեղի բարձրությունը գրունտից կազմում է 2.75մ: Բնակելի շենքերը բաղկացած են 18 վերգետնյա, 2 ստորգետնյա հարկերից: Շենքերի միջև ընկած հեռավորությունը կազմում է 27.3մ: Կարկասը իրենից ներկայացնում է միաձույլ Ե/Բ կոնստրուկցիա: Ստորգետնյա երկու հարկերը նախատեսվում են որպես ավտոկայանատեղի՝ ամեն հարկում 26 ավտոմեքենայի համար՝ ընդհանուր 52 ավտոմեքենա: Ընդհանուր երկու շենքի ստորգետնյա ավտոկայանատեղերը նախատեսվում է 104 միավոր մեքենայի համար:

Ստորգետնյա ավտոկայանատեղի մոտենալու ճանապարհը կազմակերպված է շենքերից դուրս սկսվող ուղիղ թեքահարթակով, այնուհետև պտտվելով իջնում է մինչև -4.45մ և ապա՝ 8.05մ նիշերը: Ավտոկայանատեղի իջնող մուտքը առանձին կառույց է՝ մոնոլիտ կոնստրուկցիայով: Շենքերի առաջին հարկում նախագծված է երկու առանձին հասարակական տարածքներ՝ իրենց առանձին մուտքերով: Տարածքներն ունեն մի քանի մուտքի հնարավորություն իրենց պատկանող ճակատներից, որը հետագայում հնարավորություն կտա սրահները բաժանել մի քանի ավելի փոքր տարածքների: Հասարակական երկու տարածքը իրարից բաժանում է շենքի շքամուտքը, որն ամբողջությամբ առանձնացված է և ունի երկու մուտքի և ելքի հնարավորություն: Զուգահեռ ճակատներից, նախատեսվում է նաև մեկ ելքի հնարավորություն դեպի առաջին հարկ իջնող աստիճանավանդակի հարթակի նիշից՝ որպես տարհանման հնարավորություն: Երկու շենքներն էլ միանման են և ունեն բնակելի 17 հարկ: 3.90-9.90 նիշերում տեղակայված են 6 բնակարան, իսկ 12.90-51.90 նիշերում 4 բնակարանով հարկեր:

Յուրաքանչյուր շենքում նախատեսվում է 74 բնակարան, ընդհանուր՝ 148 բնակարան: Բոլոր բնակարանները ունեն բաց պատշգամբ, որոնք նաև կարող են ծառայել օդակարգավորիչ սարքերը տեղադրելու համար, որպեսզի շենքի ճակատների վրա բնակիչներն իրավունք չունենան դրանք ամրացնելու: Շենքն ունի ևս մեկ հարկ՝ 54.90մ նիշի վրա, որը բնակելի չէ, այլ ծառայելու է շենքի տեխնիկական սպասարկման համար և համարվելու է տեխնիկական հարկ: Տվյալ տարածքներից կազմակերպված է ելք՝ դեպի տանիք, որը նույնպես նախատեսված է կանաչապատել խոտածածկով, նույնիսկ հողե տարաներով տնկել ծառեր, որոնք փողոցից երևալով ավելի քան էսթետիկ տեսք կտան շենքին:

Շենքերի ճակատները նախատեսված է երեսպատել երեք տեսակի քարերով: Առաջին հարկը մինչ 3.90մ նիշը երեսպատել բազալտե քարերով, իսկ դրանից վերև տրավերտինով, որոշ մասեր սև տուֆով, որը ավելի կընդգծի կոնսոլային ֆորմաները՝ շենքին տալով ավելի էլեգանտ տեսք:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և կանաչապատել:

Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է միանալով Երևան քաղաքի ոռոգման ցանցին (շինարարական աշխատանքների ավարտից հետո պայմանագրային հիմունքներով):

Տարածքում առկա է քանդման ենթակա ցածրահարկ շինություններ: Քանդումից և շինարարության ընթացքում առաջացող շինարարական աղբը՝ 526մ³ ծավալով կտեղափոխվի շինարարական թափոնների աղբավայր, որի հաստատումը Երևանի քաղաքապետարանից կստացվի համապատասխան թույլտվություն:

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԿ
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՆՁԻ
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր համալիրի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 64,0 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլտվության տրամադրման օրվանից:

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Շենքի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա:

Հիմնական մեքենաներ և մեխանիզմներ՝ աշտարակային վերամբարձ կռունկ TEREX CTT 91-TS12, ավտովերամբարձ կռունկ KC-65713-1 , բեռնատար ավտոբետոնախառնիչ СБ-69Б, բեռնատար ինքնաթափ МАЗ 5550, շարժական կոմպրեսոր ЗИФ – 55В, բուլդոզեր KOMATSU D37–EX–22, էքսկավատոր Hyundai 170W:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների, հողի (գրունտի) ջրցանի, շինանձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար:

Նախատեսվող գործունեության ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ D=200 մմ ջրագծին և D=600մմ կոյուղատարին:

Շենքերի էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի:

Շահագործման փուլում շենքերի գազաֆիկացումն իրականացվելու է համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը պետք է բարեկարգվի և կանաչապատվի՝ 2355մ^2 մակերեսով:

Կանաչապատման համար բուսահողը Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կբերվի կառուցապատվող հողամաս անմիջապես օգտագործումից առաջ և ժամանակավոր կծածկվի պաշտպանիչ թաղանթով:

Ծառերի և թփերի տնկման աշխատանքները կիրականացվեն Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված՝ կանաչապատման նախագծին համապատասխան: Ոռոգումն իրականացվելու է տարածքի հարևանությամբ գոյություն ունեցող ոռոգման ցանցից՝ կնքվելիք պայմանագրի համաձայն: Տարածքում

ՀՀ ՇՐՋԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
02548163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТНОЙ КОМИССИИ
COMMISSION OF EXPERTS
RA YEREVAN

նախատեսվում է տնկել թխկի՝ 2հատ, գնդաձև իլենի՝ 10 հատ, գնդաձև սամշիտ՝ 4 հատ, կատալպա՝ 14 հատ, ձիակասկ՝ 10 հատ, սյունաձև թույա՝ 12 հատ, փռվող գիհի՝ 6 հատ, ասպիրակ՝ 10 հատ, ֆորզիցիա՝ 6 հատ:

Այն տեղամասերում, որտեղ առկա են հնարավոր ազդեցություններ, տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ: Կանաչապատման համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Նախատեսվող գործունեության կատարման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ազդեցություններ, որոնք հիմնականում կապված կլինեն հողային ու բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի ու մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի ու արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- բոլոր մակերեսներների, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքների վերականգնում են մինչև սկզբնական վիճակի,
- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացվելու է ջրցանում,
- պարբերաբար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացվելու է կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը իրականցվելու է փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկվելու է համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխելու է փոշու տարածումը,
- շինարարական աշխատանքերի ժամանակ շենքը ծածկվելու է փոշու տարածումը կանխող համապատասխան ցանցով,
- ջրցանի ծավալները հաշվարկվելու է այնպես, որ չառաջանա մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական նյութերը կուտակվելու են բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթամթերքի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, այդ տարածքներում կապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև կներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ,
- աշխատանքների ավարտից հետո մաքրվելու են բոլոր տարածքները և առաջացած թափոնները տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Բուսահողի լիցքը, ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը իրականացվելու է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող ժամանակակից տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործելու են տեխնիկական նորմալ վիճակում, շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվելու դրանց աղմուկի մակարդակին,բոլոր մեքենաները ապահովվելու են համապատասխան խլացուցիչներով,
- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառվելու է անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը,
- մթնոլորտային օդ արտանետվող նյութերի (փոշի, CO, NOx) որակական և քանակական պարամետրերի պարբերական կատարվելու են չափումներ՝ ամիսական հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
- օգտագործված յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով իրականացվելու են հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ կատարվելու են երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ կատարվելու են երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- ամբողջ շինարարության ընթացքում բնապահպանական միջոցառումների համար նախատեսվելու է 2440000 հազ. դրամ:

Պատճառաբանական մաս.

Համաձայն նախնական հայտի, բազմաբնակարան բնակելի համալիրը կառուցվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Հայտով նախատեսված միջոցառումների կատարման արդյունքում կնվազեցվեն շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները:

Հայտը լրամշակվել է նաև տրված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են արտակարգ իրավիճակների նախարարությունը, կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը, առողջապահության նախարարությունը, քաղաքաշինության կոմիտեն, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ
РА ЕРЕВАН
RA YEREVAN

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:
2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների բեռնվածությունը:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերն ու կանոնները՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարաի 2017թ. մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի պահանջների:
5. Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ չնախատեսված կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան մարմինների թույլատվությամբ:
6. Ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը: Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար, իրականացնի աճի և կպչողականության զննումներ,
7. Իրականացնել շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում:
8. Ժամանակավոր պարսպապատել շինարարական հրապարակը, իսկ կառուցվող շենքերը և շինությունները պարփակել շինարարությանը համապատասխան բարձրության ցանցով:
9. Լվանալ շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը, իսկ կեղտաջրերը հեռացնել՝ միացնելով ջրահեռացման ցանցին:
10. Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է պատշաճ կերպով իրականացնել ջրցանման աշխատանքները, նվազագույնի հասցնելով փոշու առաջացումը:
11. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման դեպքում պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:»

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՈՒ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Էդուարդ Հովհաննիսյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Նազարբեկյան թաղամաս հ.44/3 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր պահպանման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Գլխավոր մասնագետ՝ Յու. Մատինյան